ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Տնօրինական խորհրդի

նախագահ Ք. Աբրահամյան

« 09 » 01 2024 թ.

(ստորագրություն)

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քոլեջի միջազգայնացմանը նպաստող քաղաքականության նպատակը որակի շարունակական բարելավումն է, որը հաստատության զարգացման ռազմավարական ուղղություններից մեկն է: Քոլեջը ձգտում է ինտեգրել համաշխարհային կրթական ու մշակութային տարրեր՝ բարելավելու համար մատուցվող կրթության որակը և բարձրացնելու Քոլեջի հեղինակությունը:

Քոլեջի տեսանկյունից միջազգայնացման նպատակներն են՝

1. միջազգային գործունեության խթանումը, մասնավորապես՝ արտասահմանյան (ԵՄ) կրթական ծրագրերում և նախագծերում քոլեջի մասնակցության մեծացումը,
2. աշխատողների միջազգային գործունեության խթանումը և փորձի փոխանակման հնարավորությունը:
3. Միջազգայնացման քաղաքականությունը միտված է նաև Քոլեջի ռազմավարական ծրագրի միջազգայնացմանն առնչվող նպատակների իրականացմանը,
4. Միջազգայնացման քաղաքականությունը ուղղված է ռազմավարական ծրագրի «Ոչ միայն չի կարելի հետ մնալ միջազգային տիրող չափանշային մակարդակից, այլև պետք է հմտորեն օգտագործել համամարդկային ձեռքբերումները, համարձակորեն, գիտականորեն հիմնավորված և տնտեսական երաշխիք ենթադրող սեփական առաջարկությունները հնչեցնել բարձր ամբիոններից» նպատակի միջոցառումների իրականացմանը:

Նախատեսված գործառույթներն են

1. օտար լեզուներով դասընթացների իրականացում,
2. օտար լեզուներով դասավանդվող մասնագիտական առարկաների թվի ավելացում:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

1. համատեղ կրթական ծրագրերի նախագծում, մշակում և իրականացում,
2. համատեղ նախաձեռնություններ հետազոտության, դասավանդման բնագավառում՝ հմտությունների, կարողությունների և փորձառության միավորում, ինչպես նաև համագործակցություն տարբեր շահակիցների, այդ թվում՝ ձեռնարկությունների հետ,
3. ակադեմիական շարժունություն՝ արտագնա և ներգնա (ուսանողներ, դասախոսներ):

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քաղաքականության ճիշտ իրականացման պայմաններում ակնկալվող արդյունքներն են

1. համագործակցության շրջանակների ընդլայնում ՀՀ-ում և արտերկրում,
2. տեղական և միջազգային կրթական դրամաշնորհային ծրագրերին ակտիվ մասնակցություն՝ ֆինանսավորման նոր աղբյուրների ներգրավման հեռանկարով:

ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. կրթական ծրագրերի և մոդուլների ներդրում՝ օտար լեզուներով, ամառային ծրագրերի մշակում,
2. շարժունության ծրագրերի շուրջ ուսանողների և աշխատակիցների իրազեկվածության բարձրացում,
3. տպագրված հոդվածների ավելացում օտարալեզու պարբերականներում,
4. օգտագործել տոնավաճառները, այցելությունները, սոցիալական ցանցերի ու օտարերկրյա ներկայացուցչությունների հետ ունեցած կապի հնարավորությունները,
5. կրթական ծառայությունները ներակայացնել օտարերկրացի ուսանողներին՝ օգտագործելով տարբեր միջոցներ, այդ թվում՝ կայքը,
6. միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածքի ստեղծում և պատասխանատու անձի նշանակում, որը կզբաղվի ընթացակարգերի մշակմամբ միջավայրի ստեղծմամբ,
7. արտաքին կապերի ակտիվացում՝ միջազգայնացման նպատակով,
8. օտար լեզվի դասավանդման առարկայական ծրագրերի բարելավում,
9. միջազգային և դրամաշնորհային ծրագրերի մասնակցության ապահովում: